ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Ավանդությունները ժողովրդական բանահյուսության քիչ հետազոտված ստեղծագործություններից են։ Մեզ հայտնի չէ նրանց էությունն ու ժանրային առանձնահատկությունները բացահայտող որևէ ուսումնասիրություն՝ ո՛չ հայ և ո՛չ էլ այլ լեզվով։ Ներկա աշխատանքը մի փորձ է այդ ուղղությամբ, կատարված ընդհանրապես ավանդությունների և հատկապես հայոց ավանդությունների մեր հավաքած հարուստ նյութերի հիման վրա՝ հայ դասական հեղինակներից մի քանիսի համապատասխան ասույթների ու մտքերի օգտագործումով։

1

Ավանդությունները էպոսի նման ժողովրդական բանահյուսության առավել ազգային և ուշագրավ ստեղծագործություններից են և ունեն ինչպես ճանաչողական, այնպես էլ գաղափարական ու գեղարվեստական նշանակալից արժեք։ Դրանք ծագել ու ձևավորվել են բնությունից և պատմական իրականությունից մարդկանց ստացած անմիջական տպավորությունների ու ընկալումների հիման վրա։ Սկզբնական շրջանում ավանդությունները կրել են շրջապատի իրականության, պատմական կոնկրետ դեպքերի ու դեմքերի, իրերի ու երևույթների վերաբերյալ ժամանակակիցների ու ականատեսների հաղորդած յուրօրինակ բանավոր պատմումների ու վերհուշերի կերպարանք։ Ժամանակի ընթացքում, սակայն, դրանց որոշ մասը ունենալով հետաքրքիր բովանդակություն և դրավիչ պատմելաձև անցել է բերնե-բերան և տարածվել հասարակության լայն խավերում։ Ժողովրդի մեջ իրենց ունեցած երկարամյա կենցաղավարության հետևանքով, քննության առարկա պատմումների ու հաղորդումների առանձին մանրամասներ աստիճանաբար մոռացության են տրվել կամ էլ դրանք հետզհետե լրացվել ու հարստացվել են իրական կյանքից վերցված նոր դրվագներով։ Միաժամանակ, այդ պատմումներն ու հաղորդումները անցնելով հավաքական ստեղծագործության բովով, կամաց կամաց ձեռք են բերել վիպական բանահյուսության երկերին հատուկ գույն ու երանգ, գեղարվեստական համապատասխան արտահայտչականություն։ Նրանց մեջ հանդես եկող իրական-պատմական դեմքերը աստիճանաբար վեր են ածվել գեղարվեստական ընդհանրացում-կերպարների, օժտվելով հասարակական այս կամ այն խավի ներկայացուցիչներին հատուկ տիպական գծերով, հղկվել ու բյուրեղացել է նրանց կառուցվածքը, լեղուն և ոճը, ձևավորվել ու կայունացել են պատկերները։ Այդ բոլորի հետևանքով, դեպքերին ժամանակակից-ականատեսների եր-

բեմնի սովորական ու հասարակ պատմումներն ու վերհուշերը, ժամանակի հոլովումով ձեռք են բերել ժանրային յուրահատուկ նկարագիր և ժողովրդական ավանդության կերպարանք մտած դարձել հոծ զանգվածների սեփականությունը։

Ժողովրդական ավանդությունների մեջ, տվյալ երկրի աշխատավոր մեծամասնության գոյի ու գիտակցության խորը տեղյակության հիման վրա, խոսուն գրվագներով, կենդանի կերպարներով և գունեղ պատկերներով արտացոլված է նույն այդ երկրի բնաշխարհն իր բնորոշ առանձնահատկություններով, ժողովրդական կյանք ու կենցաղի, բարքերի ու հավատալիքների ուրույն պատկերը, ժամանակի տնտեսական-հասարակական, քաղաքական և մշակութային երևույթներն ու հասկացողությունները, տարբեր ցեղերի ու ցեղախմբերի, տոհմերի ու տոհմակցությունների ծագումն ու փոխհարաբերությունները, նրանց առաջնորդների կյանքն ու մղած կռիվները, զանազան դասերի ու դասակարգերի միջև գոյություն ունեցող հակասություններն ու պայքարը և այլն։

Ավանդությունները պետք է դասել ժողովրդական բանահյուսության վիպական ժանրի ստեղծագործությունների շարքը։

Տվյալ ժանրի մնացած բոլոր հիմնական ստեղծագործությունների (առասպել, հեքիաթ, վեպ, առակ) նման նրանք արտաքին աշխարհը՝ բնությունը և մարդկային-հասարակական կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերացնում, վերարտադրում են առարկայացված ձևով և պատմողական եղանակով։

Վիպական բանահյուսության մյուս ստեղծագործությունների հետ ունենալով էական ընդհանրություններ, ավանդություններն օժտված են նաև ոչ պակաս կարևոր յուրահատկություններով, որով և նրանք առանձնակի տեղ են գրավում հիշյալ ստեղծագործությունների շարքում։

Դիցաբանական առասպելների նման ավանդությունները ևս համեմատաբար փոքր ծավալի մեջ արտացոլում են վաղնջական մարդկանց պատկերավոր մտածողության տարրերը, նրանց երևակայության մեջ և այդ երևակայության միջոցով անգիտակցական և դեղարվեստական եղանակով մշակված բնությունն ու հասարակական ձևերը[1], առանց սակայն ասավածացնելու բնության երևույթներն ու մարդկանց, որը դիցաբանական առասպելների ամենաբնորոշ հատկանիշն է։

Էպոսի նման ավանդությունները ևս արտացոլում են տվյալ ժողովրդի իր ինքնորոշման համար մղած դարավոր ազատագրական պայքարը, նրա ազգային բնավորության ուրույն գծերը, պատմական ճակատագիրը, աշխատանքային առօրյան, վարքն ու բարքը, այն էական տարբերությամբ, սակայն, որ մինչդեռ էպոսի մեջ այդ ամենը տրված է բազմազան ու հարուստ սյուժեի ու կերպարների միջոցով, ավանդությունների սյուժեն անհամեմատ ավելի սահմանափակ է, կերպարները եզակի, ծավալը բազմապատիկ փոքր։

Առակների նման ավանդությունների մեջ ևս դդալի տեղ են գրավում կենդանիներն ու բույսերը, այն տարբերությամբ միայն, որ եթե առակները այլաբանական ստեղծագործություններ են և կենդանին ու բույսն այստեղ ծառայում են լոկ իբրև միջոց մարդկային-հասարակական հարաբերությունները

[1] Կ. Մարքս. Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 271։

բացահայտելու, չարն ու վատը մերկացնելու, քննադատելու և ծաղրելու, բարին ու լավը դրվատելու և քարոզելու համար, ապա ավանդությունները ֆիշ են աղերսվում այլաբանությանն հետ և կենդանիներն ու բույսերը նրանց մեջ հանդես են գալիս ոչ այնքան իբրև օրինակ կամ միջոց, որքան իբրև ինքնակա էակներ ու առարկաներ՝ *իրենց ծագումով, կենսագրությամբ և բնորոշ առանձնահատկությունների նկարագրությամբ։*

Շփման որոշ կետեր կարելի է գտնել նաև հեքիաթների և ավանդությունների, հատկապես իրապատում հեքիաթների և ավանդությունների միջև։ Դրանք են երկուսի մեջ առկա՝ կենսական երևույթների ու հարաբերությունների առավել ճշմարտապատում վերարտադրությունը, փոքր ծավալը, դրվագային սյուժեն, պարզ կառուցվածքը, պատմելու ռեալիստական ոճը *և այլն։*

Կան ավանդություններ էլ, որոնք մասամբ աղերսվում են հրաշապատում հեքիաթների հետ։ Դրանք այն ավանդություններն են, ուր իրադարձությունների շարադրանքը միահյուսվում է հեքիաթային ֆանտաստիկայի հետ և որոնցում իբրև արտահայտչական միջոց կարևոր դեր է խաղում չափազանցությունը։ Նման ավանդությունները առաջին հայացքից թողնում են կոնկրետ տեղից ու ժամանակից կտրված հնարանքների տպավորություն։ Սակայն սուր աչքը հեքիաթային ֆանտաստիկայի ետնախորշում նրանց մեջ կարող է նկատել ռեալ իրականության տարրերը, բուն պատմական ճշմարտությունը։

Ընդհանրացնելով մեր ասածը ժողովրդական ավանդությունների ժանրային նկարագրի վերաբերյալ, կարող ենք հանգել հետևյալ բնութագրությունը սահմանմանը. ավանդությունները ծավալով փոքր, երբեմն մի քանի նախադասությունից միայն բաղկացած, կես իրական, կես ստեղծական գեղարվեստական պատմումներ են, կամ սովորական վերուշ-հաղորդումներ, համեմատաբար նեղ շրջանակների մեջ դրված վիպական ուրույն դրվագներ։ Ժողովրդական ավանդությունների նյութն են կազմում բնության առանձին երևույթները ու առարկաները, պատմական աշխի ընկնող դեպքերն ու դեմքերը, ժողովրդական կենցաղը, սովորությունները ու հավատալիքները։ Ավանդությունների համար բնորոշ է սյուժեի սահմանափակությունը կամ էլ վերջինիս իսպառ բացակայությունը, ավելի իրական, քան հրաշապատում տարրի գերակշռությունը, կառուցվածքի ու ոճի պարզությունը, սեղմ ու անզարդ շարադրանքը, անձի, առարկայի և տեղի պարագայի շեշտված առկայությունը։

Ժողովրդական ավանդություններին մոտ ու աղերսակից ստեղծագործություններ են ավանդական զրույցները։ Լինելով հիմնականում նույն տիպի փոքրածավալ բանավոր պատմումներ, ինչ և բուն ավանդությունները, ավանդական զրույցները վերջիններից տարբերվում են գլխավորապես իրենց բովանդակությամբ։ Մինչդեռ ավանդությունները մեծ մասամբ տեղագրական և պատմական բնույթի ստեղծագործություններ են, ավանդական զրույցները գլխավորապես կենցաղական, սնահավատական և կրոնա-բարոյական հորինվածքներ են։

Ըստ իրենց բովանդակության ու բնույթի ավանդություններն ու ավանդական զրույցները հիմնականում չորս տեսակի են.

ա) Բնաշխարհիկ, *ուր պատմվում է տվյալ բնաշխարհի բաղկացուցիչ տարրերի՝ լեռների ու ձորերի, մարգագետինների ու դաշտերի, լճերի ու գետերի, առուների ու աղբյուրների, բույսերի ու կենդանիների, գյուղերի ու քաղաքների, բերդերի ու կամուրջների մասին, բացահայտվում են վերջիններիս*

ծագումն ու առանձնահատկությունները, ժողովրդական ստուգաբանությամբ յուրովի մեկնաբանվում դրանց անունն ու կոչումը։

բ) Պատմական, որոնց մեջ արձագանքվում են տվյալ ժողովրդի պատմական անցյալի կարևոր իրադարձությունները, այդ իրադարձությունների մեջ ակնառու դեր խաղացած նշանավոր մարդկանց կյանքի ու գործի ուշագրավ դրվագները։

գ) Կենցաղական, որոնք բացում են մեր առաջ ժողովրդական կենցաղի ու հնավանդ բարքերի բնորոշ կողմերը, խոսուն օրինակներով ցուցադրում դրանց հետ կապված սովորութական հարաբերություններն ու հասկացողությունները։

դ) Սնահավատական, որտեղ արտացոլում են գտել ժողովրդի հնամենի պատկերացումներն ու ըմբռնումները զանազան չար ու բարի ոգիների, գերբնական էակների, բիբլիական կերպարների, կրոնի, եկեղեցու մասին և այլն։

Վիպական բանահյուսության մյուս ստեղծագործությունների հետ ունեցած իրենց հիմնական ընդհանրությունների ու տարբերությունների հետ միասին, ժողովրդական ավանդություններն ու ավանդական զրույցները ունեն ոչ պակաս բնորոշ հետևյալ առանձնահատկությունները ևս։

Մինչդեռ հեքիաթը, վեպը, առակը ինքնակա նշանակությամբ ժողովրդի մեջ ապրում են անկախ կյանքով և դիտակցվում են իբրև բանահյուսական հատուկ տեսակ, ավանդությունները հիշվում ու պատմվում են գլխավորապես այն ժամանակ, երբ խոսք է լինում դրանց նյութ հանդիսացող այս կամ այն առարկայի, անձի ու արարածի (դիցուկ՝ երկնքի կամ երկրի, արևի կամ լուսնի, լեռան կամ գետի, ծառի կամ ծաղկի, կենդանու կամ թռչունի, քաղաքի կամ գյուղի, ամրոցի կամ վանքի, թագավորի կամ զորավարի, մատենագրի կամ իմաստասերի, ծաղկողի կամ գուսանի, դրողի կամ նկարչի, ճարտարապետի կամ քարտաշի) մասին։ Առանց նմանօրինակ առիթ-կապակցության, որևէ ավանդություն հազիվ թե հիշվի ու պատմվի։

Առանձնապես սերտ ու ամուր է ժողովրդական ավանդությունների և նյութական կուլտուրայի հուշարձանների միջև եղած կապը։ Անառարկելի փաստ է այդ հուշարձանների (բերդ, կամուրջ, տաճար, վիմական արձանագրություն և այլն) ունեցած կարևոր դերը բազմաթիվ ավանդությունների ու զրույցների՝ ժողովրդի հիշողության մեջ պահպանվելու գործում։

Ուշագրավ է այս տեսակետից Ն. Մառի հետևյալ ակնարկը, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես Հայաստանում եղած սեպաձև արձանագրությունները նպաստել են ժողովրդական ավանդությունների հարատևմանը։ Իր աշխատություններից մեկում անդրադառնալով ուրարտական թագավորների սխրագործությունների վերաբերյալ Հայաստանում պատմվող ավանդություններին, ականավոր հայագետը գրում է. «...Այդ ավանդությունները զգալի օժանդակություն էին գտնում հանելուկային գրերի (իմա՝ սեպաձև արձանագրությունների—Ա. Ղ.) փաստի մեջ, որոնք արդեն չէին հասկացվում, բայց որոնց մեջ ըստ ժողովրդական ավանդությունների տակավին շարունակում էին տեսնել Հայաստան աշխարհի մեծ շինարարների կատարած գործերը»[1]։

[1] Н. Марр, Надписи Сардура II, Տե՛ս «Археологическая экспедиция 1915 г. в Ван» գրքում, Петербург, 1922, էջ 60—61.

Շատ բնորոշ է այս առումով Վանի մոտ գտնվող հայանի Մհերի դուռն իր սեպաձև արձանագրություններով։ Կասկածից վեր է, որ այս հնագույն հուշարձանին ենք մենք գլխավորապես պարտական Մհերի, հեթանոսական շրջանից եկող այդ առասպելական նշանավոր կերպարի մասին մեր ունեցած բազմաթիվ ավանդություններով ու զրույցներով[1]։ Բնավ պատահական չէ, որ այդ ավանդություններն ու զրույցները պահպանվել են հատկապես Վասպուրականում, մասնավորապես Վանի շրջակայքում, այնտեղ, ուր գտնվում է Մհերի դուռը։

Նույնը կարելի է ասել նաև Կաղզվանի գավառում գտնվող Խանդութի բերդի մասին, որն իր մոտակայքում ապրող բնակչության մեջ երկար դարեր կենդանի է պահել Խանդութի և Դավթի գեղեցիկ ավանդավեպը[2], և բազմաթիվ ուրիշ բերդերի, կամուրջների, վանքերի, խաչքարերի և այլնի մասին։

Սակայն, նյութական կուլտուրայի հուշարձանները միայն ժողովրդի հիշողության մեջ չէ, որ կենդանի ու վառ են պահել իրենց հետ ավել կամ պակաս չափով կապված ավանդություններն ու զրույցները։ Նույն այդ հուշարձաններն են, որ պատճառ են դարձել նաև շատ ու շատ ժողովրդական ավանդությունների ու զրույցների գրականության մեջ մուտք գործելուն։ Այս տեսակետից շատ ցայտուն է հայոց գրականության օրինակը։ Բազմաթիվ հայ հեղինակներ, Խորենացուց մինչև Աբովյան և հետո, իրենց պատմական և գրական երկերում տարբեր առիթներով հիշելով կամ նկարագրելով Հայաստանում գտնվող նյութական կուլտուրայի այս կամ այն հուշարձանը, ի միջի այլոց, մեջ են բերել նաև այդ հուշարձանի հետ կապված ժողովրդական ավանդություններն ու զրույցները։

Ժողովրդական ավանդությունների ու զրույցների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ի տարբերություն հեքիաթի, վեպի, առակի, որոնք մեծ մասամբ ունեն իրենց հատուկ հորինողներն ու կատարողները, ավանդություններն ստեղծվում ու պատմվում են ավելի լայն շրջաններում, ո՛չ միայն ժողովրդական հայտնի ասացողների, այլև սովորական մարդկանց կողմից, որոնք ժամանակին լսած լինելով այս կամ այն բանավոր պատմությունավանդությունը, իրենք էլ իրենց հերթին, ավելի կամ նվազ հարազատությամբ ու հաջողությամբ, այն հաղորդում են ուրիշներին։

Կարևոր է նշել մի հանգամանք ևս։ Մինչդեռ ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ստեղծագործությունները ունեն իրենց ժանրը կամ տեսակը ցույց տվող որոշակի անուններ (առասպել, հեքիաթ, վեպ, առակ, երգ, առած, հանելուկ և այլն), ավանդություններն ու զրույցները ժողովրդի մեջ ապրում են, մեծ մասամբ, անանուն։ Վերջիններս հիշելիս կամ դրանք վկայակոչելիս, ժողովրդի մարդիկ, սովորաբար, առանց այս կամ այն հատուկ անունը տալու, գործ են ածում՝ «պատմում են», «ասում են» արտահայտությունները, կապելով այն տվյալ պատմության նյութ հանդիսացող գլխավոր երևույթի, առարկայի, անձի կամ արարածի հետ։ Այդպիսի արտահայտությունների կիրառման կոնկրետ օրինակներ են տալիս մեզ հետևյալ հայկական ավանդությունները և բազմաթիվ ուրիշ նմաններ։

---

[1] «Սասնա ծռերք», խմբ. պրոֆ.-դր. Մ. Աբեղյան, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Ա հատ., Երևան, 1936, էջ 931, 1021, 1083, 1125 և հետ.։

[2] Ղ. Ինճիճյան, Աշխարհագրություն, հատ. Ա., Վենետիկ, 1806, էջ 121։

«Նախիջևանից ոչ հեռու կա մի վանք, որն հայտնի է Կարմիր վանք անունով. ասում են թե Ավարայրի ճակատամարտից վիրավորներին բերել են այստեղ և նրանց արյունով կարմիր են ներկվել վանքի գավիթն ու սանդուղքները։ Այստեղից էլ մնացել է Կարմիր վանք անունը»։

«Պատմում են, թե երբ Լենկ-Թեմուրը հարձակվում է Աշտարակի վրա, աշտարակցիք միացած օշականցոց հետ լավ դիմադրում են թշնամուն և վերջը այնքան են նեղում նրան, որ Թեմուրը ոտից ծանր վիրավորվելով, ընկնգալով փախուստի է դիմում։ Դրանից հետո նրա անունը մնում է Լենկ-Թեմուր»։

«Թալին գյուղի մոտ կա մի աղբյուր, որի մասին ասում են, թե ժամանակին մի կույր մարդ լվացվել է նրա ջրով և աչքերը բացվել են. դրա համար էլ աղբյուրը այդ օրվանից կոչվել է Լուսաղբյուր»։

«Պատմում են, որ արջը ժամանակին ջրաղացպան է եղել և որովհետև շատ գողություններ է արել՝ ասված բարկացել է վրան և արջ է դարձրել» և այլն։

Ինչ վերաբերում է «ավանդություն» և «զրույց» անուններին, ապա պետք է ասել, որ դրանք գրքային ծագում ունեն և մեզանում գործ են ածվում գլխավորապես գրականության մեջ։ «Ավանդությունը» հայերենում, այլ իմաստների հետ, նշանակում է նաև սերնդե-սերունդ անցնող անգիր կամ բանավոր պատմություն։ Օրինակ. հին ավանդություններ գրի առնել։ Այս բանը մենք ավանդությունից գիտենք։ Ավանդությունը պատմում է, թե պատերազմն այստեղ է եղել, և այլն։ «Զրույցը» ի թիվս այլ առումների (խոսք, խոսակցություն, առուլիս, համբավ, լուր, տեղեկություն, պատմություն, պատմական նյութ և այլն), գործ է ածվում նաև բերնե-բերան շրջող խոսքի, ավանդության իմաստով։ Օրինակ. ժողովրդական զրույցներ։ Խորենացին իբրև աղբյուր օգտվել է անգիր զրույցներից։ Պառավական զրույց, և այլն[1]։

Հայոց հին և նոր գրականության մեջ «ավանդություն» և «զրույց» անվանումները մեծ մասամբ գործ են ածվել համապատասխան ածականների հետ միասին։ «Ավանդության» սովորական ածականներից են եղել «ժողովրդական», «բանավոր», «հին», «պառավական», «հնօրյա» ածականները, «զրույցինը»՝ «ժողովրդական», «անգիր», «վաղնջուց» «գեղջկական» և այլն։

«Ավանդություն» անվանումը հիմնականում տրվել է բնաշխարհիկ և պատմական պատմումներին։ «Զրույց» անվանումը իրենց վրա կրել են գլխավորապես կենցաղական, բարոյախոսական և սնահավատական պատմումները։ Պատահել է հաճախ էլ, որ տվյալ անվանումները կիրառվել են նաև իբրև համանիշներ, կամ էլ, իրենց արտահայտած նյութի բովանդակությունն ավելի որոշ դարձնելու նպատակով, ընդունել են համապատասխան բացահայտիչներ։ Այսպես օրինակ. բնաշխարհիկ և պատմական բնույթի պատմումների համար՝ «ավանդության» հետ մեկտեղ, ասել են նաև՝ «զրույց», «պատմական զրույց», «տեղագրական զրույց», «գենեղանական զրույց» և այլն։ Կենցաղական, բարոյախոսական և սնահավատական պատմումներին, «զրույցից» բացի կոչել են նաև «ավանդություն», «կենցաղական ավանդություն», «բարոյախոսական ավանդություն», «սնահավատական ավանդություն» և այլն։ Բացի այդ, ժողովրդական ավանդությունները մեր գրականության մեջ հանդես են եկել նաև

---

[1] Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հատ. Ա, էջ 292, հատ. Բ, էջ 41։

հայերեն՝ «ավանդավեպ» և լատիներեն՝ «լեգենդ» (legenda) անվանումներով։ Օրինակ. «ազգային ավանդավեպ», «ժողովրդական ավանդավեպ», «Հայրենի լեգենդ», «կրոնական լեգենդ» և այլն։

Ժողովրդական բանահյուսության մյուս բոլոր ստեղծագործությունների նման ավանդությունները ու ավանդական զրույցները հղացվելով բանավոր ձևով, բանավոր էլ հարատևել են՝ անցնելով բերանից-բերան, սերնդից-սերունդ և դարից-դար։ Ապրելով ըստ ամենայնի կենդանի ու հարաշարժ կյանքով, ավանդությունները ժամանակի հոլովումով ենթարկվել են զգալի փոփոխությունների՝ մի կողմից լրացման, խմբագրման, մշակման ու կատարելագործման ուղղությամբ, մյուս կողմից՝ խանգարման, աղճատման, մոռացության ու քայքայման ճանապարհով։ Դրան ամենից առաջ պատճառ է հանդիսացել ավանդությունների անդիր ստեղծագործություն լինելու հանգամանքը, ապա նաև նրանց արձակ պատմումի ձև ունենալը, որը, ինչպես հայտնի է, շատ ավելի է ենթակա փոփոխման, քան տաղաչափական ու ռիթմիկ կայուն ու որոշակի շրջանակների մեջ դրված, երբեմն էլ համապատասխան եղանակ-մեղեդու հետ կապված այս կամ այն չափածո երկը։

Ժողովրդական ավանդությունների և մասնավորապես պատմական ավանդությունների դարերի ընթացքում կրած փոփոխությունների պատկերը լավ գծագրված է Մ. Նալբանդյանի կողմից Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպին նվիրված նրա հայտնի «Կրիտիկա»-ում։ Նալբանդյանն այդ առթիվ գրել է. «Ավանդությունը, որքան հեռանում են իրենց ծագման ժամանակից, այնքան շուտ կերպարանափոխ են լինում, ընկնելով ժամանակների և հասկացողության ազդեցության տակ, մինչև այն աստիճան, որ շատ անգամ դժար է լինում հասկանալ կամ մեկնել»։ Եվ ապա. «...Մի անցք, կամ մի իրողություն, որ ստուգապես պատահած էր, դնենք Թորոսի ժամանակ, այդ բանը համարվում է եղած կամ Մինասի ժամանակ, որ շատ առաջ էր ապրել Թորոսից, կամ Նիկողոսի, որ Թորոսից շատ դարեր հետո էր ծնել»[1]։

Իսկ քիչ անց անդրադառնալով նույն խնդրին, Նալբանդյանը անում է հետևյալ ուշագրավ ընդհանրացումը. «Ամեն բան հնացնող և մաշող ժամանակը հնացնում և մաշում է, այո՛, շատ անգամ և իսպառ չքացնում է այս կամ այն ավանդությունը, այս կամ այն ծեսը և սովորությունը։ Շատ անգամ թերևս այդ բոլորը մնալով գործադրության մեջ, այնուամենայնիվ տալիս են դարերի ազդեցության իրենց հարկը. նոքա զրկվում են իրենց ներքին խորհրդից և դառնում են մի պիտակ բան...»[2]։

Չբավարարվելով պատմական ավանդությունների ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների փաստի լոկ արձանագրումով, Նալբանդյանը փորձել է բացահայտել նաև դրա պատճառները։ Նա միանգամայն իրավացիորեն պատմական ավանդությունների փոփոխման պատճառը համարում է սոցիալական պայմանների մեջ կատարված փոփոխությունները («պատճառ՝ կյանքի և ընկերական պայմանը փոխված են»)։ Ըստ Նալբանդյանի՝ «Ժամանակի առաջ ու հետ խաղալը ավանդություններում կախված է վերջիններիս մեջ հանդես եկող պատմական անձանց ու հերոսների, ազգի մեջ ունեցած խորհրդից, արժանավորությունից ու հատկությունից»։ «Հայտնի է,— գրում է նա,— թե մի

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1940, հատ. 3-րդ, էջ 144։

[2] Նույն տեղում, էջ 163։

պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվիլ մի սուրբի, որպես նաև մի հրաշագործություն՝ մի երևելի զորավարի։ Եթե ազգը Թորոսի օրով տեսել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, ազգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կխլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, որ կամ առաջ է ապրել Թորոսից կամ վերջը, որի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության։ Ավանդությունները, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, որ այդ մարդը շատ դարերից հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան սքանչելի անցքերի ու գործերի, իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար, զրկվում են իրենց ստուգապես ունեցածից»[1]։

Ելնելով վերոհիշյալից Նալբանդյանը բացահայտել է ավանդությունների հետ կապված մի էական հանգամանք ևս, որ է՝ անվան երկրորդական դերը ավանդությունների ժամանակի որոշման գործում։

Իբրև օրինակ վերցնելով Լուսավորչի կանթեղի ավանդությունը, նա միանգամայն ճիշտ կերպով նշում է, որ որևէ անվան առկայությունը այս կամ այն ավանդության մեջ բավական չէ այդ ավանդության ստեղծման ժամանակը որոշելու համար։ Նալբանդյանը գրում է. «Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չէ կարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարումն է երևել այդ կրակը։ Այո՛, կարող էր և այն ժամանակ երևիլ. մեր խոսքը այդ չէ, այլ այն, թե լոկ անունը չէ կարող ընդունվիլ որպես ապացուցություն ժամանակի, ավանդությանց մեջ»[2] (ընդգծումը մերն է — Ա. Ղ.)։

Ավանդությունները, ժողովրդական բանահյուսության մյուս բոլոր ստեղծագործությունների նման, իբրև դարավոր ու բանավոր, կենդանի ու հարափոփոխ կյանքով ապրած հորինվածքներ, ունեն իրենց բազմաթիվ ու բազմազան նմանակներն ու տարբերակները։ Վերջիններս կարևոր ու հետաքրքիր են ոչ միայն ինքնին վերցրած, այլև այս կամ այն «բնորդ» ավանդության հիմքում ընկած պատմական իրողությունը վեր հանելու և նրա անցած ստեղծագործական ուղին պարզելու տեսակետից։

Ավանդությունների նմանակների ու տարբերակների գոյության փաստը, որը ժողովրդական բանահյուսության օրինաչափ երևույթներից մեկն է, պայմանավորված է, նախ և առաջ, համապատասխան սոցիալական պատճառներով։ Միևնույն ավանդության մեջ հանդես եկող գործող անձանց արարքները, արտացոլված դեպքերի գնահատականները և այլն, հասարակական տարբեր խավերի ու դասակարգերի միջավայրում ձեռք են բերում տարբեր և ուրույն բնույթ։

Տարբերակների գոյացման գործում պակաս նշանակություն չունի նաև առանձին պատմողների կամ ասացողների կողմից արդեն անհետացած հին կենցաղի երևույթներն ու հնօրյա պատկերացումները ճիշտ չընկալելու հանգամանքը, ինչպես նաև տվյալ անձին կամ երևույթին նրանց կողմից տրվող ինքնօրինակ մեկնաբանությունը և այլն։

Հիմնականում բավական կայուն ձևով պահպանելով տվյալ «բնորդ» ավանդության սյուժեն, գլխավոր գործող անձանց անուններն ու բնավորու-

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3-րդ, էջ 115, 145, 163։
[2] Նույն տեղում, էջ 145։

թյունները, միևնույն դեպքի կամ դեմքի մասին ստեղծված ավանդությունների առանձին նմանակներն ու տարբերակները, պատմվելով տարբեր վայրերում ու միջավայրերում, ստանում են տարբեր երանգավորումներ։ Այդ նմանակների ու տարբերակների մեջ հեռավոր անցյալին վերաբերող դեպքերի ու դեմքերի հետ կապված մանրամասները, ժամանակի ընթացքում մոռացության են տրվում։ Դրանց փոխարեն այստեղ ներմուծվում են այնպիսի նոր մոտիվներ, որոնք բնորոշ ու սազական են ժամանակակից կյանքի փոփոխված պայմաններին և հասարակական նոր հարաբերություններին, առավել մեծ ազատություն է ստանում ստեղծագործական երևակայությունն ու հնարանքը։

Միևնույն ստեղծագործության նմանակների ու տարբերակների հետ միասին, ժողովրդական ավանդությունների մեջ մենք գտնում ենք նաև միևնույն անունով կամ թեմայով, բայց բովանդակությամբ, սյուժեով ու մոտիվներով տարբեր ստեղծագործությունների առանձին շարքեր կամ ցիկլեր։ Այդպիսի շարքեր կան բնության առավել աչքի ընկնող առարկաների ու երևույթների (լեռներ, ծովեր, գետեր...), տնտեսական և պաշտպանական մեծ նշանակություն ունեցող շինությունների ու ամրությունների (կամուրջ, ճանապարհ, բերդ...), պետական, քաղաքական, ռազմական և կուլտուրական խոշոր գործիչների (թագավոր, զորավար, գրող...) մասին եղած ավանդությունների մեջ և այլուր։

Իբրև օրինակ, հիշենք հայ ժողովրդական բանահյուսության մեջ Մասիս և Արագած լեռների, Սևանա և Վանա լճերի, Տաթևի ու Գեղարդա վանքերի, Մեսրոպ Մաշտոցի, Վարդան Մամիկոնյանի, Շապուհ արքայի, Գր. Նարեկացու, Լենկ-Թեմուրի, Շահ-Աբասի, Դավիթ Բեկի մասին եղած ավանդությունների շարքերը և այլն։

Նմանակների ու տարբերակների պես ժողովրդական ավանդությունների առանձին շարքերի առաջացումն ու գոյությունը ևս պայմանավորված է համապատասխան պատմական, հասարակական ու ստեղծագործական հանգամանքներով։ Հիմնականն այստեղ որևէ թեմայի կամ նյութի, պատմական դեպքի կամ դեմքի կարևորությունն ու մեծությունն է, նրա ունեցած բախտորոշ նշանակությունը տվյալ ժողովրդի կյանքում և դրսևորած ուժեղ ազդեցությունն ու տպավորությունը նույն այդ ժողովրդի երևակայության և ողջ մտաշխարհի վրա։

Ժողովրդական ավանդության յուրաքանչյուր ասացող-հեղինակ ըստ իր ստացած այդ տպավորության, ունեցած տեսադաշտի, մոտեցման ու ընդգրկման կարողությունների, իր ստեղծագործության մեջ դրոշմել է տվյալ թեմայի կամ նյութի, պատմական դեպքի կամ դեմքի որևէ կողմը, որով և գոյացել են միևնույն անունով կամ թեմայով, բայց բովանդակությամբ, սյուժեով ու մոտիվներով տարբեր ավանդությունների բաղմաթիվ շարքեր։

Ժողովրդական ավանդությունների առանձին շարքերը կամ ցիկլերը նշանակալից նյութ են տալիս այս կամ այն պատմական իրողության և վերջինիս ժողովրդի կողմից տրված գնահատականի վերաբերյալ ավելի ամբողջական ու ճշգրիտ պատկերացում կազմելու համար։

Ինչպես աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության մյուս բոլոր հուշարձանները, այնպես էլ ավանդությունները բանահյուսական այլ ժանրերից անջրպետված ու մեկուսի ստեղծագործություններ չեն։

Տարբեր տիպի ավանդությունների մեջ, ավել կամ պակաս չափով, կարելի է դիտել ընդհանրապես ժողովրդական բանահյուսության և հատկապես

վերջինիս վիպական ժանրին պատկանող այլ և այլ ստեղծագործությունների առանձին տարրերը, իսկ այդ ստեղծագործությունների մեջ էլ ավանդությունների սյուժեների ու մոտիվների, ոճի ու ոգու առկայության փաստը։ Եվ դա բնական ու հասկանալի է։ Գալով դարերի խորքից և երկարատև շփման մեջ գտնվելով վիպական բանահյուսության մյուս ստեղծագործությունների հետ, ավանդությունները բնականորեն ենթարկվել են դրանց ազդեցությանը, իրենք էլ իրենց հերթին ներգործել այդ ստեղծագործությունների վրա։

Մի շարք ավանդություններ ժամանակի ընթացքում ձեռք են բերել առասպելական որոշ գծեր, իսկ առանձին առասպելներ էլ ստացել են պատմական ավանդության կամ զրույցի երանգավորում։ Այդպիսի ստեղծագործությունների նմուշներ են մեզանում Արտավազդի, Անգեղ Տորքի, Հայկի ու Բելի, Արայի ու Շամիրամի մասին եղած պատմա-առասպելական կարճառուտ պատմումները և ուրիշ նմաններ։ Հատկանշական է այն հանգամանքը, որ հիշյալ ստեղծագործությունները, մեր հին ու նոր գրականության մեջ անվանվել են մերթ «առասպել», մերթ «զրույց» և մերթ էլ «ավանդություն» բառերով։

Կան ավանդություններ էլ, որոնք ապրելով ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ, ժամանակի ընթացքում վեր են ածվել փոքրաշունչ հեքիաթների, իսկ վերջիններիս որոշ նմուշներ էլ, փոխելով իրենց ժանրային կերպարանքը, դարձել են ավանդության կամ զրույցի նման մի բան։ Այդպիսի հորինվածքների կարելի է հանդիպել կենցաղային ու այլ մոտիվներ ունեցող ժողովրդական մի շարք բանավոր պատմումների մեջ, որոնք բանահավաք-հրատարակիչների կողմից նրանց բանահյուսական ժողոմածուներում դրված են մերթ ավանդությունների, մերթ էլ հեքիաթների շարքում։ Նման ստեղծագործությունների բնորոշ օրինակներից են՝ «Հոմվի կամուրջը», «Իրիցկնկա աղբյուրը», «Հարսն ու կեսուրը» վերնագրով հայտնի ավանդություն-հեքիաթները կամ հեքիաթ-ավանդությունները։

Քիչ չեն և այն ավանդությունները, որոնք ժողովրդական բանահյուսության մեջ չափական ձև ու եղանակ ստանալով դարձել են վիպական երգեր, և կամ այն վիպերգերը, որոնք կորցնելով իրենց չափականությունն ու եղանակը վեր են ածվել սովորական զրույցի կամ ավանդության։ Այդպիսի ավանդություն-վիպերգերի կամ վիպերգ-ավանդությունների ցայտուն նմուշներ են մեզանում Գրիգոր Նարեկացու և Ասլան Աղայի մասին եղած հանրահայտ արձակ ու չափածո վիպական ստեղծագործությունները։

Առանձնապես մոտ ու օրգանական է ավանդությունների կապը ժողովրդական վեպի կամ էպոսի հետ։ Բանագիտության մեջ վաղուց ընդունված և համապատասխան փաստական նյութով հաստատված է այդ հանգամանքը։ «Ժողովուրդների և դասակարգերի կյանքում կարևոր նշանակություն ունեցող դեպքերը,— կարդում ենք մենք այդ առթիվ «Սասնա ծռերի» Ա. հատորի ներածության մեջ,— խոր տպավորություն թողնելով մասնակիցների և նրանց շրջապատի վրա՝ սովորաբար առաջ են բերում բազմաթիվ զրույցներ, անհատականորեն խիստ երանգավորված պատմվածքներ ու երգեր, ապա մի քանի սերունդ հետո կազմվում են հաճախ նաև ընդարձակ ավանդություններ։ ...Այսպիսի ավանդություններն ու պատմական երգերը, որոնք հորինվում են զանազան ժամանակներում, սկզբում անջատ-անջատ են ապրում շահագրգռված հասարակության մեջ, բայց հետագայում դրանք հետզհետե օրգանապես միացվում են։ Այս վերջին դեպքում զանազան պատմական անձերի մասին հյուս-

ված զրույցներն ու երգերը համախմբվում են այս կամ այն կենտրոնական, մեծագույն ազդեցություն ունեցող կամ բացառիկ համբավ վայելող պատմական դեմքի շուրջը, և այսպիսով ստեղծվում է վիպական երգերի ու զրույցների մի ցիկլ, ապա և ամբողջական վիպասանություն։ Այստեղ իրար հետ միացած պատմվում են ոչ միայն կենտրոնական դեմքի պատմական սխրագործությունները, այլև նախորդ ու հաջորդ շրջաններից նույն տոհմի կամ անգամ այլ տոհմերի նույնանուն կամ տարբեր անունով հերոսների պատմական գործերը, ինչպես նաև ամեն տեսակի զրույցներ և ավանդություններ»[1]։

Այսպես են ահա ծագել բոլոր ժողովուրդների հին ու նոր հերոսական մեծ վեպերը, այդ թվում նաև հայ ժողովրդի ազգային մեծ էպոս՝ «Սասնա ծռերը» կամ «Սասունցի Դավիթը»։ Վերջիններիս մեջ ներթափանցած հնօրյա ավանդություններից ու ավանդական զրույցներից, իբրև օրինակ, կարելի է հիշատակել Սասնո Սանասարի զրույցը՝ վեպի «Սանասար և Բաղդասար» ճյուղից, Տարոնի ու Մուշեղի զրույցը՝ «Դավիթ և Խանդութ» ճյուղից, Փոքր Մհերի՝ Տոսպան բլրի մեջ կամ Ադովու քարում փակվելու ավանդությունը՝ «Փոքր Մհեր» ճյուղից, և այլն[2]։

Ինչ վերաբերում է ավանդությունների ճակատագրին, ապա պետք է նշել, որ այն հիմնականում նույնն է, ինչ և էպոսի ու ժողովրդական բանահյուսության մի քանի այլ տեսակների ճակատագիրը։ Վերջիններիս նման ավանդությունները ևս իրենց կենսունակությունը պահպանում են այնքան ժամանակ, որքան ժամանակ իրականության մեջ դեռ զոյություն է ունենում նրանց ծնող ու սնող հասարակական հողը։ Այդ հողի խարխլման և հին կենցաղի ու հասկացողությունների վերափոխման հետ միասին հետզհետե մոռացության են տրվում նաև հնօրյա ավանդություններն ու զրույցները։ Դրա հետ մեկտեղ, հասարակական-քաղաքական կյանքում և ժողովուրդների պատմական զոյավիճակի մեջ կատարված նոր ու կարևոր տեղաշարժերը (ազգային ազատագրական պայքար, ազդամիջյան ու քաղաքացիական կռիվներ, հեղափոխություն, համաշխարհային պատերազմ), հոգևոր կյանքում և մշակույթի մեջ տեղի ունեցած խոշոր իրադարձությունները նոր նյութ տալով ժողովրդական ասացողների ստեղծագործական երևակայությանը, հիմք են դառնում նոր ավանդությունների ու զրույցների հորինման համար, որոնց մեջ լայնորեն օգտագործվում են տվյալ ժանրի անցյալից եկող լավագույն տրադիցիաները (սյուժե, մոտիվ, վիպական կերպարների ստեղծման եղանակ, արտահայտչական ձևեր և այլն)։

Այդպիսի նոր ու նորագույն ստեղծագործությունների բնորոշ օրինակներից են հայ իրականության մեջ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Րաֆֆու, Թումանյանի, Կոմիտասի, Իսահակյանի և ուրիշների մասին 19 և 20-րդ դարերում ստեղծված ավանդություններն ու զրույցները, որոնց մեջ հայ ժողովուրդը յուրովի արտացոլել է իր հարազատ զավակների կատարած ազդանվեր, հայրենասիրական, հերոսական, կուլտուր-լուսավորական ու ստեղծագործական մեծ սխրանքներով ու տառապանքներով լի կյանքի ու գործունեության առավել աչքի ընկնող դրվագները։

---

[1] «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, էջ 7—8։ Խմբագրեց պրոֆ.-դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի։

[2] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 95, 98—109, 181 և հետ։

Այդպիսի նորոգ ստեղծագործություններից են տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի, ժամանակակից բանահյուսության մեջ Լենինի մասին ստեղծված բազմաթիվ ղրույցներն ու ավանդությունները, որոնց մեջ, ինչպես դիտված է, Լենինը հասցված է «հնության առասպելական հերոսի՝ Պրոմեթեոսին հավասար բարձրության»[1]։

2

Մեծ է ժողովրդական ավանդությունների թե՛ պատմական և թե՛ ճանաչողական նշանակությունը։ Ճիշտ է, նրանց մեջ հաճախ բացակայում է ստույգ ժամանակագրությունը, երբեմն շփոթվում են պատմական դեպքերն ու դեմքերը, մի պատմական անձնավորության կատարած գործը վերագրվում է մեկ ուրիշի, բայց, այդուհանդերձ, նրանք չեն դադարում կարևոր պատմական սկզբնաղբյուրներ և «պատմությունը լուսավորող ճառագայթներ»[2] լինելուց, քանզի նրանց մեջ յուրովի դրսևորված է բուն պատմական իրականությունը և իշխում է պատմության կուռ ու վավերական տրամաբանությունը։

Խոսելով ժողովրդական բանահյուսության պատմական և ճանաչողական անուրանալի արժեքի մասին, Մ. Գորկին նշել է, որ «Աշխատավոր ժողովրդի իսկական պատմությունը չի կարելի իմանալ, առանց իմանալու ժողովրդական բանավոր ստեղծագործությունը», որը «ամենահին ժամանակներից անբաժան և յուրահատուկ կերպով ուղեկցում է պատմությանը»[3]։

Այդ բանը ամենից շատ և առաջին հերթին վերաբերում է էպոսին, ապա նաև ժողովրդական ավանդություններին։ Առանց գերագնահատելու ավանդությունների պատմական արժեքը կարելի է ասել, որ դրանք իրոք ժողովրդական բանահյուսության այն ստեղծագործություններից են, որոնք ղեկավարեն հարստացնում են մեր ունեցած տվյալներն անցյալի վերաբերյալ, իսկ մի շարք դեպքերում էլ, այլ կարգի նյութերի բացակայության պայմաններում, ձեռք են բերում եղակի պատմական սկզբնաղբյուրների նշանակություն։

Ժողովրդական ավանդությունների պատմական և ճանաչողական խոշոր արժեքը պայմանավորված է նրանց հիմնականում ռեալիստական ստեղծագործություններ լինելու հանգամանքով։ Ճիշտ է, այդ ռեալիզմը ինչպես ընդհանրապես ժողովրդական բանահյուսության, այնպես էլ ավանդությունների մեջ, իր բնույթով «նախակերտ ռեալիզմն» է, բայց այնուհանդերձ այն ինքնին ռեալիզմ է։

Ավանդությունների լավագույն նմուշները ծնվել են ոչ թե դիպվածով, պատահական դեպքերի շուրջը, այլ ստեղծվել են ժողովրդի համար կենսական ու բախտորոշ նշանակություն ունեցող սոցիալ-քաղաքական անցուդարձերի կապակցությամբ։ Նրանց մեջ կյանքը դիտված է ժողովրդի տեսանկյունից և հարազատորեն ու լայնորեն արտացոլված է նույն այդ ժողովրդի ողջ կենսագրությունը, նրա էթնիկ ձևավորման պրոցեսը, ապրած աշխարհագրական-բնական միջավայրը, պատմական գոյավիճակն ու ճակատագիրը և ժամանակի իրականությունն առհասարակ։

---

[1] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 293։

[2] Գ. Արվանձատյան, Թորոս ապրար, կ. Գոյիս, մասն Ա, էջ 259։

[3] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 292։

Այդ է պատճառն ահա, որ ժողովրդական ավանդությունները թե՛ հնում և թե՛ նոր ժամանակներում, իբրև կարևոր պատմական սկզբնաղբյուր, ըստ արժանվույն գնահատվել և օգտագործվել են տարբեր ժողովուրդների մի շարք ականավոր պատմիչների և դիտության այլ բնագավառների ներկայացուցիչների կողմից։

Իբրև առավել բնորոշ օրինակ հիշենք «պատմության հայր» անվանված Հերոդոտոսին, որի նշանավոր «Հույն-պարսկական պատերազմների պատմության» մեջ նշանակալից տեղ են գրավում հնօրյա ավանդություններն ու զրույցները, Ֆ. Էնգելսին, որն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հայտնի աշխատության մեջ, անցյալ հասարակական-տնտեսական պարբերաշրջաններում գոյություն ունեցող իրավական, կենցաղային և այլ կարգի երևույթներն ու հարաբերությունները վերականգնելու և բնութագրելու, մասնավորապես հնօրյա տոհմերի ու ներտոհմային հարաբերությունների ծագումն ու առանձնահատկությունները պարզելու համար, այնքան յուրջ նշանակություն է տվել ժողովրդական ավանդություններին ու զրույցներին[1]։

Հայ պատմիչներից հիշենք «քերթողահայր» Մ. Խորենացուն, որն իր քննախույզ մտքով թափանցել է հայոց վաղնջական դարերի առասպելական զրույցների ու պատմական ավանդությունների իրական-կենսական միջուկի խորքը։ Խորենացու կարծիքով, ժողովրդի մեջ պատմվող այդ զրույցներն ու ավանդությունները այնպիսի ստեղծագործություններ են, որոնք «ճշմարտութիւն իրացն այլաբանաբար չինքեանս ունին թաքուցեալ»[2]։ Ահա թե ինչու նա իր Պատմության մեջ մեկնելով ու վիր հանելով այդ ստեղծագործությունների մեջ եղած «հավաստի» պատմական կամ բնական իրողությունը, խելամտորեն օգտագործել է դրանք իբրև պատմական կարևոր սկզբնաղբյուր։

Ժողովրդական ավանդությունների, մասնավորապես հայկական ավանդությունների մասին, իբրև «հարուստ պատմական աղբյուրի» տարբեր առիթներով արտահայտվել է նաև Բաֆֆին։ Մեծ գրողը իրավացիորեն ավանդությունները համարել է «այն թանկագին ժառանգությունը», որը «կարող է լույս դցել մեր ազգի խորին առասպելա-վիպական անցյալի վրա»[3]։ Բաֆֆու համոզմունքով ավանդություններն ու զրույցները կարող են զգալիորեն լրացնել մեր պատմագրության մեջ ժողովրդական կյանքի վերաբերյալ եղած տեղեկությունների նկատելի բացը։ Այդ առթիվ նա գրել է. «Մեր ժողովրդի մեջ մինչև այսօր իրանց սկզբնական պարզությամբ պահպանվել են՝ զանազան ավանդություններ... զրույցներ և այլն։ Դրանք այնպիսի խորին կապ ունեն մեր ամենահին անցյալի հետ, որ մասամբ կարող են լրացնել այն թերությունները, ինչ որ նկատվում են մեր պատմագրությանց մեջ։... Որպես բնագետը մի կենդանու քարացած ժանիքից կազմում է մի ամբողջ գազափար նրա մարմնի կազմվածքի մասին, նրա ջրհեղեղյան գոյության մասին, այնպես և հետախույզ հնագետը մի ժո-

---

[1] Տես՝ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 36—37, 80—82, 137, 159։

[2] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, գիրք Ա, գլ. Գ, էջ 12, հավելված Ա., էջ 90։

[3] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, Թիֆլիս, 1895, էջ 286։ Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 57։

ղովրդական ավանդությունից կարող է եզրակացնել նույն ազգի անցյալ կյանքի այս և այն ձևերը»[1]։

Վեր հանելով ժողովրդական ավանդությունների ու զրույցների էական նշանակությունը հայոց պատմության ինչպես հնագույն, այնպես էլ ավելի նոր շրջանների ուսումնասիրության համար, Բաֆֆին միաժամանակ չի մոռանում նաև ընդգծել այն դժվարությունները, որ ծառանում են ավանդություններն իբրև պատմական սկզբնաղբյուր օգտագործել ցանկացողի առաջ, դրանց ստեղծագործական ու ժանրային յուրահատուկ առանձնահատկությունների պատճառով։ «Հայտնի բան է,—գրում է նա,— որ միայն ժողովրդական ավանդությունների վրա հիմնվելով, շատ դժվար կլիներ կազմել մի քանի դարերի շարունակ պատմությունը։ Ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը, մեկի գործողությունը մյուսին է վերաբերում, և ամենադժվարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշտություններ չէ պահպանում, պատմական իրողությունները տեղափոխում է կամ շատ առաջ և կամ շատ հետո։ Բացի դրանցից, ժողովուրդն ունի յուր լեգենդները, յուր իդեալները, յուր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որ չէին կարող նրանց կատարածը լինել... Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»[2]։

Սակայն, ժողովրդական ավանդությունները միայն պատմական վավերականներ չեն։ Դրանք ոչ պակաս նշանակալից են նաև իրենց գաղափարական բովանդակությամբ, իբրև ժողովրդի հոգեկան աշխարհի կենդանի ու խոսուն հուշարձաններ։

Ավանդությունների մեջ ճշմարտացի և յուրօրինակ ձևով արտացոլված է տվյալ ժողովրդի՝ պատմական որոշակի ժամանակաշրջանում, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական համապատասխան պայմաններում գոյացած ու ձևավորված հոգեբանությունը, նրա ազգային բնավորության առանձնահատկությունները, նրա մտորումներն ու նվիրական զգացմունքները, դավանած գաղափարներն ու փայփայած երազանքները։

Ժողովրդական բանահյուսության մյուս լավագույն ստեղծագործությունների նման, ավանդությունների մեջ ցայտուն կերպով արտահայտված է աշխատավոր ժողովրդի առողջ կենսափիլիսոփայությունը, նրա լավատեսությունն ու մարդասիրությունը, ազատասիրությունն ու հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու խաղաղասիրությունը, նրա խոր դիտակցությունը սեփական ուժի անխորտակելիության և իր անմահության ու հավերժության մասին, նրա վառ հավատը իր վերջնական հաղթանակի և լավագույն ապագայի նկատմամբ։

Ժողովրդական բանահյուսության մյուս լավագույն ստեղծագործությունների հերոսների նման, ավանդությունների հերոսները ևս բնության տարերքի և հասարակական կյանքի չար ուժերի դեմ ժողովրդի մղած դարավոր համառ մաքառումների փայլուն անձնավորումներն են, նրա խիզախության, անվհատ կամքի, անձնազոհության ու այլ հոգեկան բարեմասնությունների կենդանի կրողները։

---

[1] Բ ա ֆ ֆ ի, Գոականության մասին, Երևան, 1958, էջ 57—58։

[2] Բ ա ֆ ֆ ի, Խամսայի մելիքությունները։ Թիֆլիս, 1895, էջ 297։

Շատ բնորոշ է այս առումով Խ. Աբովյանի հայացքը Հայկի ու Բելի, Արայի ու Շամիրամի, Տիգրանի ու Աժդահակի, Տրդատի և այլոց առասպելական զրույցների ու պատմական ավանդությունների մասին, իբրև հայ ժողովրդի ազատասիրական ոգին, նրա բուռն հայրենասիրությունն ու հերոսականությունը ցայտուն կերպով մարմնավորող բանավոր հուշարձանների։

Իր «Վերք Հայաստանի» վեպում բուն վիպական շնչով նկարագրելով գեղեցի անվանի դյուցազուն Հովակիմի և սրա քաջարի զինակից-ընկերների՝ իսկական ժողովրդական այդ վրիժառուների կատարած անօրինակ սխրանքները, Աբովյանը նրանց այդ սխրանքների հոգն ու զինարանը համարում է նրանց հարազատ բնաշխարհն իր բնական հրաշալիքներով, պատմական նշանավոր հուշարձաններով և վերջիններիս հետ կապված ժողովրդական հնօրյա հերոսավեպերով ու հայրենանվեր ավանդություններով, հակադրելով դրանք տերթոդիկյան վարժարաններում ուսուցանվող «անսիրտ պատմություններին»։ Նա գրում է. «...Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, բանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ, նրանց համար կենդանի վարժապետ։ Ամեն դերեզման, ամեն արձան նրանց համար կենդանի վկա, ու պատմագիր...»[1]։

Ժողովրդական ավանդությունների գաղափարական բովանդակության ընութագրման համար հատկանշական է նաև Ավ. Իսահակյանի հետևյալ ասույթը, ըստ որի ավանդությունները կամ լեգենդները ոչ այլ ինչ են, բայց եթե՝ «մի որևէ ժողովրդի լավի, ազնիվի, վեհի, գեղեցկի ցանկությունների իրականացումները»[2]։

Ժողովրդական ավանդությունները աչքի են ընկնում նաև իրենց գեղարվեստական անժխտելի արժանիքներով։ Նրանց մեջ հիանալի կերպով դրսևորված է ժողովրդի ստեղծագործական վառ երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը, ժողովրդական բանարվեստի անսպառ գանձերի գունագեղ արտահայտչականությունը։

Անհրաժեշտ է առանձնապես նշել ավանդությունների մեծ վարպետությամբ ու բարձր արվեստով կերտված լավագույն տիպերի ու կերպարների մասին, որոնք ժողովրդական բանահյուսության մյուս ստեղծագործությունների լավագույն տիպերի ու կերպարների նման, հանդես են գալիս համապատասխան տիպիկական հանգամանքներում։ Նրանք աչքի են ընկնում իրենց խորությամբ ու պայծառությամբ, իրենց գեղարվեստական կատարելությամբ։ Նրանց ստեղծման մեջ «ներդաշնակորեն զուգակցվել են ռացիոն և ինտուիցիան—միտքն ու զգացմունքը»[3]։

Ժողովրդական ավանդությունների մեջ հանդես եկող լավագույն տիպերի ու կերպարների մասին, որոշ վերապահությամբ, կարելի է ասել այն, ինչ ասել է Հեգելը էպոսի կերպարների մասին. այն, որ դրանց մեջ «աղգը խտանում է առանձին անհատների կերպարանքով», որ դրանք «իրենց ինքնօրինակության մեջ բովանդակում (ամփոփում) են համընդհանուրը», որ դրանք «ինքնըստ-

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948, հատ. III, էջ 54, 93, 96, 180։

[2] Ավ. Իսահակյան, Խոհեր, «Գրական թերթ», 1960, № 44։ Նյութերը հեղինակի արխիվից քաղել և հրատարակել է Ա. Ինճիկյանը։

[3] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 283—284։

ինքյան ամբողջական մարդիկ են հանդիսանում և ունեն դծերի ամբողջականություն»[1]։

Իբրև նման կարգի տիպերի ու կերպարների բնորոշ օրինակներ, հիշենք Հերկուլեսին, Պրոմեթեոսին, Ֆաուստին, հիշենք մեր Հայկին, Արտավազդին, Մհերին։

Ժողովրդական ավանդությունների տիպերն ու կերպարները յուրովի ղեկավարում են տվյալ սոցիալ-պատմական երևույթի և տվյալ սոցիալական ուժի բուն էությունը։ Դրանք արգասիք չեն վոկ երևակայության, այլ հիմնականում օրինաչափ ու անհրաժեշտ արտահայտություն են իրական փաստերի, վերջիններիս հիման վրա կատարված գեղարվեստական-բանահյուսական ուրույն ընդհանրացումներ։

Իրենց գաղափարական ու գեղարվեստական բարձր արժանիքների համար ժողովրդական ավանդությունները գրավել են տարբեր երկրների մի շարք հին ու նոր ականավոր գրողների ու արվեստագետների ուշադրությունը, գնահատվել ու ստեղծագործորեն օգտագործվել են նրանց կողմից։

Իբրև ցայտուն օրինակներ, հիշենք՝ Հոմերոսին ու Դանթեին, Միքելանջելոյին ու Ռաֆայելին, Շեքսպիրին ու Գյոթեին, Պուշկինին ու Տոլստոյին, Բալզակին ու Միցկևիչին, որոնք իրենց ստեղծագործությունների դոները մեկից ավելի անգամներ բաց են արել հավաքական հանճարի այդ գոհարների առաջ։

Հայ հեղինակներից հիշենք հատկապես Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի անունները, որոնց մի ամբողջ շարք լավագույն ստեղծագործությունները (առաջինի՝ «Աղավնու վանքը», «Թագավորն ու շարչին», «Ախթամարը», «Թմկաբերդի առումը», երկրորդի՝ «Հայրենի հողը», «Ժողովրդի քնարը», «Մոր սիրտը», «Հավերժական սերը» և այլն) գրված են համապատասխան ժողովրդական ավանդությունների հիման վրա։

Զարմանալի ուշագրավ է նաև Հովհ. Թումանյանի կարծիքը ավանդությունների՝ ժողովրդի «հանճարի», նրա «ոգու և մտքի», «ընտանեության, աշխարհայացքի ու շնորհքի» այդ «լավագույն ծնունդների»[2] գրականության զարգացման համար ունեցած կենսական կարևոր նշանակության մասին։

Իր նամակներում և հոդվածներում բազմիցս անդրադառնալով ժողովրդական ավանդություններին ու զրույցներին, ժողովրդական բանահյուսության իր ամենասիրած ժանրերից մեկին, Թումանյանը դրանք համարել է «սքանչելի» և «հրաշալի» բաներ, «մեր գրականության հարազատ հողն ու պատվանդանը», այն աղբյուրը՝ «որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա»[3]։ Նա գտնում է, որ՝ «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»[4]։

---

[1] Гегель, Сочинения, том XV, М., 1958, стр. 251, 252, 280.

[2] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 113, հատ. VI, էջ 65—66, 113։

[3] Նույն տեղում, հատ. V, էջ 150, 269, հատ. VI, էջ 65—66։

[4] Նույն տեղում, հատ. V, էջ 147։

Մի ուրիշ անգամ էլ, անդրադառնալով հայոց լեզվի ու գրականության զարգացման գործում ժողովրդական բանահյուսության, այդ թվում նաև ավանդությունների խաղալիք կարևոր դերին, Թումանյանը գտնում է, որ «մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար պետք է... մշտական տեղ հատկացնել հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին...»[1]։

Վեր հանելով ժողովրդական ավանդությունների պատմական, գաղափարական և գեղարվեստական արժանիքները, չի կարելի սակայն անտեսել այն հանգամանքը, որ նրանց մեջ երբեմնապես հանդիպում են նաև նվազ արժեքավոր ու անմշակ ստեղծագործություններ, աշխատավոր ժողովրդի հիմնականում առողջ ու առաջավոր էությանն ու բնավորությանն անհարիր որոշ հորինվածքներ, նրա աշխարհայացքի պատմական սահմանափակության հետ կապված նախապաշարմունքային, պահպանողական ու հետադիմական որոշ մոտիվներ։

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի մեջ առկա նմանօրինակ այլ հորինվածքների ու մոտիվների նման, վերոհիշյալ կարգի ավանդությունների գոյությունը հետևանք է աշխատավորական խավերի անցյալում ապրած իրավազուրկ, ճնշված ու անազատ գոյավիճակի։ Դրանց մեջ, իբրև գերազանցապես գյուղացիական ստեղծագործությունների, ճշմարտացի արտացոլումն է գտել նաև գյուղացիության որոշ շերտերի մանրբուրժուական հոգեբանությունը, նրանց հետամնացությունը, հեռավոր անցյալի հավատալիքներով ու կենցաղի վերապրուկներով կաշկանդված լինելը, ինչպես նաև շահագործող դասերի ու դասակարգերի հայացքների ու հոգեբանության ազդեցության որոշ հետքերը։ Այս առումով առանձնապես բնորոշ են դարերի ընթացքում քրիստոնեական եկեղեցու գաղափարների անմիջական ազդեցությամբ ստեղծված կրոնական ավանդությունները։

Այս առնչությամբ չի կարելի դարձյալ չհիշել Մ. Նալբանդյանի հայտնած մտքերից մեկը ավանդությունների մասին։ Մեծ հրապարակախոս-քննադատը ժողովրդական բանահյուսության, այդ թվում նաև ավանդությունների մեջ, բուն ժողովրդական ստեղծագործությունները տարբերել է սոցիալական վերնախավերի տրամադրություններն ու հոգեբանությունն արտացոլող երկերից, վեր հանելով առաջինների արժանիքները, և, ընդհակառակը, սուր քննադատության ենթարկելով վերջինների վնասակար և հակաժողովրդական բնույթն ու էությունը։ Նալբանդյանը հիացմունքով է արտահայտվել, օրինակ, Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպում մեջ բերված շղթայված Արտավազդի ավանդության մասին, որի մեջ աշխատավոր ժողովուրդը սիմվոլացրել է շարը սանձահարելու իր կորովն ու կամքը, դարբինների ձեռքով ամրացնել տալով աշխարհին կործանում սպառնացող Արտավազդի շղթաները։ Նա գրել է. «Ազգային ավանդություն է դարբինների սալը ծեծելը, որ Արտավազդը դուրս չգա ու աշխարհը չքանդե. և մենք մեծ ուրախություն զգացինք, երբ տեսանք (եր. 42), որ տակավին պաշտվում է այդ անտիկյան ավանդությունը, թեև այդ էլ կրոնական գույն է ստացել դարձյալ, որովհետև Ավագ ուրբաթի գիշերն է միայն կատարվում։ Բայց, ինչպես և է, այնուամենայնիվ ավանդությունը կենդանի է,

[1] Հով. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 112, 113։

և այն պատմական ավանդություն, որի լոկ հիշելը բերում է մարդու երևակայության առջև ամբողջ հայ աշխարհը, որի վրայից արդեն գլորվել են շատ դարեր»[1]։

Ճիշտ հակառակ կարծիք է հայտնել Նալբանդյանը նույն «Սոս և Վարդիթերի» մեջ բերված հրաշագործ դավաղանով չոր տեղից ջուր հանող սուրբ Ականատեսի կրոնական ավանդության մասին, գրելով. «Բայց խոստովանում ենք, որ Ականատեսի ավանդությունը (էր. 108) չունի մի գորա նման արժեք։ Անշուշտ հեղինակը չէ շարադրել նորան, նա առնում է ազգի հասկացողությունից. բայց մենք մի փոքր առաջ ասածներս վերստին կրկնում ենք, թե գպրության և լուսավորության խորհուրդը այն չէ, որ ամեն անցած խավար լույս քարոզե, ամեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ որպեսզի փարատե այդ խավարը։ Այդ տեսակ բաները, մեր կարծիքով ղգուշության պետք ունին, և հեղինակը հանդես հանելով մի նմանօրինակ բան, պարտական է այնպիսի ընթացք տալ բանին, որ տասն և ինն դարու մեջ, ութերորդ ամենախավար դարին արձագանք եղած չլինի»[2]։

Քննադատաբար վերաբերվելով վերոհիշյալ կարգի ավանդություններին, պետք է պատմական մոտեցում ունենալ դրանց նկատմամբ։ Անհրաժեշտ է, նախ և առաջ, հաշվի առնել այն հասարակական և դաղափարական միջավայրն ու պայմանները, որոնք ծնունդ ու սնունդ են տվել այդ հորինվածքներին ու մոտիվներին, և ապա, որ նույնպես կարևոր է, չմոռանալ նաև այն հանգամանքը, որ քննության առարկա ստեղծագործությունները հաճախ խստորեն քննադատված, հերքված ու հաղթահարված են իր իսկ ժողովրդի կողմից, իբրև նրա հոգուն անհարազատ ու եկամուտ բաներ, իբրև նրա թույլ կողմեր։

Ամփոփենք։ Ժողովրդական ավանդություններն ու ավանդական զրույցները ընդհանրապես արտացոլում են այս կամ այն ժողովրդի ապրած բնական ու հասարակական միջավայրը, նրա պատմական ճակատագիրը, ազգային բնավորության առանձնահատկություններն ու հոգեբանությունը։ Դրանց մեջ քիչ չեն այնպիսիք, որոնք աչքի են ընկնում սոցիալական, քաղաքական ու փիլիսոփայական ընդհանրացումների ճշմարտացիությամբ ու խորությամբ և ունեն կուլտուր-պատմական ու գրական-գեղարվեստական մեծ արժեք։ Ժողովրդական բանահյուսության ուրիշ, առավել ինքնատիպ և բուն ազգային ստեղծագործությունների հետ միասին, ավանդությունները հանդիսանում են այն կարևոր ներդրումներից մեկը, որ տվյալ ժողովուրդը մտցնում է համաշխարհային մշակույթի ընդհանուր գանձարանը, լրացնելով ու հարստացնելով այն։ Այդպիսի ստեղծագործություններ են ըստ ամենայնի նաև հայ ժողովրդի կողմից դարերի ընթացքում հորինված հազարավոր ավանդությունները։

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 137—138։
[2] Նույն տեղում, էջ 138։

СУЩНОСТЬ И ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ НАРОДНЫХ ПРЕДАНИЙ

А. Т. ГАНАЛАНЯН

(Резюме)

Предания являются малоисследованными произведениями народного творчества. Ни в армянской, ни в какой-либо другой литературе нам не известна работа, раскрывающая их сущность и жанровые особенности. Настоящая статья является попыткой в этом направлении, осуществленной на основе богатого материала преданий (в особенности армянских), собранных нами, с использованием также соответствующих высказываний классиков армянской литературы.

Подобно эпосу, предания являются наиболее самобытными и интересными произведениями народного творчества и имеют значительную как познавательную, так и идейно-художественную ценность. В народных преданиях живыми образами, на основе глубокой осведомленности трудящегося большинства данной страны, ярко отражаются природа этой страны со своими характерными особенностями, своеобразия быта, обычаев и верований народа, экономические и общественные, политические и культурные явления, противоречия и борьба между различными племенами и племенными группами, сословиями и классами и т. д.

Предания принадлежат к числу эпических произведений народного творчества. Подобно другим основным видам произведений этого жанра (миф, сказка, эпос, басня), они природу и человеческие, общественные явления и отношения отображают в эпической форме. Имея ряд существенных общих черт с другими произведениями эпического творчества, предания отличаются и рядом не менее важных особенностей, благодаря которым они занимают особое место в ряду указанных выше произведений.

Предания представляют собой произведения малого объема, состоящие иногда всего лишь из нескольких предложений, и имеют характер поучительных художественных сказов или просто воспоминаний. Для преданий характерны: ограниченность рамок сюжета, преобладание скорее элементов действительного, чем сказочного, ясность и простота построения и стиля, сжатое и неприукрашенное изложение, подчеркнутое наличие обстоятельства личности, предмета и места.

Велико как историческое, так и познавательное значение народных преданий. Правда, зачастую в них отсутствует точная хронология, иногда путаются исторические события и личности, деяния одной исторической личности приписывается другой, но, тем не менее, они не перестают быть историческими первоисточниками и важными материалами, освещающими историю, ибо в них в своеобразной форме проявляется историческая действительность, выступает твердая и истинная логика истории.

Народные предания, являясь историческими эпическими документами, в то же время ценны и как живые памятники народной души. В преда-

ниях отражаются психология данного народа, сформировавшаяся в определенную историческую эпоху, в соответствующих социально-экономических и общественно политических условиях, особенности национального характера народа, его заветные мысли и чувства, его идеи и взлелеянные мечты Подобно другим лучшим произведениям народного творчества, в преданиях ярко выражена здоровая жизненная философия трудового народа его гуманизм и оптимизм, свободолюбие и патриотизм, его глубокая вера в несокрушимость своей силы, в свое бессмертие.

Вместе с другими, наиболее самобытными произведениями народного творчества предания являются важным вкладом, который народ вносит в общую сокровищницу мировой культуры, восполняя и обогащая ее. Именно такими произведениями являются и тысячи преданий армянского народа, созданных им в течение многих веков.